

Նրանք չեն ամաչել մինչև անգամ իւր՝ Շամիրի մօտ մարդիկ ուկարկել, ստանալ իսմաձախութիւն. և Զեչնալի պատգամաւորները իսկականաւոր իրանց մտադրութեան ստորութիւնը չեն չանդգնել իրանք երևալու իւր առաջ և միջնորդ են գցել մի թուլ կնօջ՝ իւր մօրը։ Մարդարէն հրամայեց հարիւր հարած տալ նորան, ու առաջին անգամ չալտնեց չեչենների ալգ մտադրութիւնը իմամին և ալգ առաջինը, աւանդ, իւր մալրն էր, սակաւն արդարութիւնը պահանջում է, որ նա ինքը պէտք է լինի դահիճը իւր սիրելի մօր։ Հինգ հարածից վտու ուշաթափուում է մալրը, զարհուրած Շամիրը ընկնում է մօր ոտքերը։ Ժողովուրդը հուզւած է և լալիս։

Իսկ իմամը կրկին ոտքի է կանգնում և չալտնում իւր կամքը՝ ընդունել իւր մէջքի վերայ մնացած հարւածները։ Մերկացնում է իւր մէջքը և հրամայում միւրիդներին

հաստ ճիպոտներով տալ իրան շնորհած, սպառնալով որ Լիթ մէկը իսմարձակի խնայել և թուլ խփել, խենջարը կը կոխի նորա փորը։ Բոլորը ապշած մնացել են։ Ամօթահար չեչենները տարածւած գետնին սպասում են իրանց մահու պատժին... բայց Շամիրը բարձրացնում է նրանց և ասում.

— Գնացէ՛ք ձեր ժողովուրդի մօտ ու պատասխանի տեղ պատմեցէ՛ք նրան ալն ինչ որ ալստեղ լսեցիք ու տեսաք։

Մութ է մնում և անհասկանալի մի բան. ալդ ինչպէս եղաւ որ «օգնական զօրք ուղարկելու մասին» Շամիրին պատգամաւորները ոչինչ չը չալտնեցին. ալն ժամանակ Շամիրը հաւանական է որ կ'ուղարկէր օգնութիւն և հարկ չէր լինի զուցէ հնազանդութեան մասին խօսել և հարւածները ոչ մալրը և ոչ ինքը կը ստանար։

Լ. Ս.

ԴՕԴԷ ԱԼՖՅՈՒՍ.— ԵԲԵՐԼԻՆԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ։ Թարգմանութիւն Ս. Պետերբուրգ տպ. Սկօրօխօրօվի. 1880 թ. 8-ժալ, 15 երես. № 12. գինը 2 կոպ.։

Շատ կենդանի գրած մի փոքրիկ հոգեբանական զրուց է Փրանկօ—պրուսական պատերազմից։ Պարիզում մի հալրենասէր ծեր գնդապետ կաթւածահարով հիւանդ պառկած իւր մահակալում ուշք ու մտքով ապրում է Փրանսիական զօրքի պատերազմական շարժումներով։ Նորան

չըջապատողները իմանալով որքան վատ հետևանք կ'ունենալ հիւանդի առողջութեան վերայ Փրանսիական զօրքի մասին վատ լուրերը, ստիպւած են հնարել և պատմել չեղած չաղթութիւններ։ Պրուսացիք արդէն Պարիզի պարիսպների տակ են, իսկ հալրենասէր գնդապետին չըջա-

պատողները, հեռանելով նորա երեսակական մարշրուտին, արդէն համաձայնում են նորա հետ և պատմում որ ֆրանսիական զօրքը շուտով լաղթական մուտք կը գործէ Լեռլին:

Պարիզը պաշարած է և թնդանօթների որոտները գուժում են նորա քանձնելը, իսկ զնդապետը կարծում է թէ ալդ ուրախութեան արտապատութիւն է Բաղէնի տարած լաղթութեան համար Բերլինի մօտ:

Եւ ծեր զնդապետը արդէն երևակաւում է որ Մակ—Մահօնը իւր լաղթական զօրքով ծաղիկների մէջ կորած անցնում է Պարիզի զարդարած փողոցներով, և նորա կողքին

իւր սպալ որդին, իսկ ինքը պատշկամրի վերալ, իւր համազգեստը հազին, շնորհաւորում է գզակներով ծակոտած և վառօղից սևացած հալրենի զրօշակները... Նա ուժ է ստանում, սպառազինած դուրս գալիս պատշկամբը, բալց ինչ... մեռելալին լռութիւն փողոցներում. ամեն տեղ երևում են պրուսական զրօշակներ. ահա հեռուից փալցեցին պրուսական սաղաւարտները, լսեց Շուքերտի լաղթական մարշը:

—'Ի զէն, 'ի զէն... պրուսացիները"... գոչեց ծեր հալրենասէրը, ուժերը թուլացան և վալը ընկաւ մեռած:
Լ. Ս.

„Объяснительный Словарь“ татарскихъ, грузинскихъ и армянскихъ словъ, вошедшихъ въ „Матеріалы для изученія экономич. быта Госуд. крестьянъ Закавказья. края. Составилъ С. П. Зелинский. Тифлисъ М. Д. Ротинянца, 1889 г.

Ինչպէս լալանի է ընթերցողին վալւածների նախարարութիւնը վերջին ժամանակներս ուզարկեց հետազօտողների մի խումբ նիւթեր ժողովելու արքունական գիւղացիների գրութիւնը բարւոքելու նպատակով: Այդ նիւթերի մէջ, որոնք ուսուցէն լեզուով տպագրւեցին վերջին հինգ տարւալ ընթացքում, հետազօտողները գործ են ածել տեղական բառեր, անուններ, ասածաքներ, որոնք օտար են ուսաց լեզուին: Պր. Ս. Ջելինսկին ժողովել է ալդ օտար բառերը և կալմել մի առանձին բառարան, որ մեզ համար շատ և շատ հետաքրքրական է: Բառարանը կալ-

մըւած է հմուտ ձեռքով և ընդարձակ բացատրութիւններով. իսկ մի քանի բառերի վերաբերմամբ նա տալիս է հեղինակի սեպհական ուսումնասիրութեան հետևանք, ալդպէս են համփա, մուշա, ոչխար (զօլուն) և ուրիշ բառերի բացատրութիւնները:

Շատ ափսոսալի է, որ բառարանը կազմւած է մի սահմանափակ չրջանի բառերի համար, միայն ալն բառերի, որոնք մուտք են գործել վերև չիշած նիւթերի մէջ: Բառերն երեք տեսակ են, թուրքերէն, վրացերէն և հալերէն. ամենամեծ տեղը ըռնում են թուրքերէն բառերը, որ